Հայաստանի Հանրապետության վարչապետ
Տ. Սարգսյանին

Դիմող՝

Էդվարդ Շահվերդի Հախվերդյան
AG0244093 տրված 19.02.2004թ. 018-ի կողմից
Հասցե՝ ք. Վանաձոր, Թումանյան 11/54

Ներկայացուցիչ՝

Արայիկ Միքայելի Զալյան
AN0752224 տրված 18.12.2013թ. 066-ի կողմից
Հասցե՝ ք. Վանաձոր Տիգրան Մեծի 59

ԴԻՄՈՒՄ

(անհատական իրավական ակտ ընդունելու պահանջի մասին)

1. Դիմումի էության հակիրճ նկարագրություն.

2011 թ. հոկտեմբեր ամսին սրտամկանի սուր ինֆարկտ ախտորոշմամբ Էդվարդ Հախվերդյանը (զինծառայողի ընտանիքի անդամ, ինչպես նաև զինված ուժերի թոշակառու) տեղափոխվել է Երևան քաղաքի «Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան ՊՈԱԿ, որտեղ կատարվել է սրտի անոթի ստենդավորում՝ 1.860.000 ՀՀ դրամ արժողությամբ:

Զինծառայողների, նրանց ընտանիքի անդամների և զինված ուժերի հաշմանդամների համար ՀՀ ստանձնել է պոզիտիվ պարտավորություն՝ ապահովելու որակյալ անվճար բժշկական օգնություն և ցանկացած բժշկական սպասարկում և աջակցությունը պետք է կատարվեր անվճար, պետության հաշվին[1]:

Է. Հախվերդյանը, հիվանդանոցից դուրս է գրվել առանց գումար վճարելու: Սակայն դեռևս ՀՀ որևէ նախարարության կողմից հիվանդանոցային ծախսերը (1.860.000 ՀՀ դրամ գումար) չեն փոխհատուցվել:

2. Փաստեր, որոնց վրա հենվում են սույն դիմումի պահանջները.

2.1. 2011թ. հոկտեմբերի 14-ին Է. Հախվերդյանին ՀՀ ՊՆ 72207 զորամասի հրամանատարի պլանորման գծով տեղակալ Ա. Ղազարյանի և զորամասի բուժկետի պետ-բուժակ Հ.Ղազարյանի կողմից տրվել է թիվ 393 ուղեգիրը, ըստ որի ուղեգրվել է Վանաձորի կայազորային հոսպիտալ թերապևտի կոնսուլտացիա ստանալու նպատակով:

1. «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդված:

2.1.1. 2011 թ. հոկտեմբերի 15-ին սրտամկանի սուր ինֆարկտ ախտորոշմամբ Էդվարդ Հախվերդյանը տեղափոխվել է Երևան քաղաքի «Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան ՊՈԱԿ, որտեղ կատարվել է սրտի անոթի ստենդավորում՝ 1.860.000 ՀՀ դրամ արժողությամբ:

2.2. Էդվարդ Հախվերդյանը վիրահատությունը իրականացնելու ժամանակահատվածում և ներկայիս էլ հանդիսանում է զինծառայողի ընտանիքի անդամ, ինչպես նաև զինված ուժերի թոշակառու: Հիվանդանոցից դուրս է գրվել առանց գումար վճարելու: Սակայն դեռևս որևէ նախարարության կողմից հիվանդանոցային ծախսերը (1.860.000 ՀՀ դրամ գումար) չեն փոխհատուցվել:

1.3. Ելնելով այն հանգամանքից, որ Է. Հախվերդյանը հանդիսանում է զինվորական թոշակառու և զինծառայողի ընտանիքի անդամ՝ նշված գումարի փոխհատուցումը պետք է իրականացվեր պետության կողմից, սակայն սահմանված ժամկետում գումարի փոխհատուցում չի իրականացվել, ինչի կապակցությամբ Երևանի «Մխիթար Հերացու անվան պետական համալսարան» ՊՈԱԿ-ը ի դեմս ռեկտոր Դ.Դումանյանի և նրա ներկայացուցիչներ Մ. Սողոմոնյանի և Գ. Մաթևոսյանի 1.860.000 (մեկ միլիոն ութ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջով նրա դեմ 13.06.2012թ. հայցադիմում են ներկայացրել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան:

20.06.2012թ. դատարանի որոշմամբ հայցադիմումը ընդունվել է վարույթ և արգելանքի է վերցվել Հախվերդյանին պատկանող սեփականությունը և նրա դրամական միջոցները (կենսաթոշակը):

1.4. 2011թ. հոկտեմբերի 17-ին Է. Հախվերդյանը դիմում է ներկայացրել ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության պետ Ա. Փարսադանյանին՝ խնդրելով, որպիսզի միջնորդի վերադաս հրամանատարությանը փոխհատուցելու բուժման ծախսերը[2]:

Նույնաբովանդակ դիմում է ներկայացրել նաև Է. Հախվերդյանի դուստր թիվ 72207 զորամասի զինծառայող շարքային Մելինե Հախվերդյանը:

1.5. 2011թ. հունվարի 26-ին ՀՀ ԶՈՒ Ռազմաբժշկական վարչության պետ Ա. Փարսադանյանի կողմից ստացվել է թիվ 19/3516 պատասխան գրությունը ըստ, որի հայտնել են, որ «պետության կողմից երաշխավորված անվճար բույժ օգնությունը կանոնակարգող ՀՀ կառավարության 04.03.2004թ. N 318 Ն որոշման համաձայն, այն իրականացնող մարմիններն են սահմանված ՀՀ առողջապահության և աշխատանքի սոցիալական հարցերի նախարարությունները: ՀՀ պաշտպանության նախարարության կողմից, անվճար բույժսպասարկման առումով զինծառայողների ընտանիքիների անդամներին ցուցաբերբող որոշակի օժանդակությունը իրականացվում է հնարավորությունների ուղղված պայմանագրրեի շրջանակներում, ինչը սույն թվականի օգոստոսի 8-ից դադարեցված է ՀՀ ՊՆ հանձնարարությամբ»:

---

2. Հախվերդյանը դիմումին կից ներկայացրել է նաև տեղեկանք թիվ 1 համալսարանական հիվանդանոցից, տրված 17.10.2011թ.:

1.6. 2012թ. դեկտեմբերի 26-ին Էդվարդ Հախվերդյանը դիմումներ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերով նախարար Արտեմ Ասատրյանին, ՀՀ առողջապահության նախարար Դերենիկ Դումանյանին, խնդրելով փոխհատուցել նրան մատուցված ծառայությունների դիմաց «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից կրած ծախսերը՝ 1.860.000 ՀՀ դրամ գումարի չափով:

1.6.1. Ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված դիմումի Է. Հախվերդյանը 23.01.2013թ. ստացել է N 19/127 գրություն, որով հայտնել է, որ համաձայն գործող իրավական ակտերի, ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությանը որևէ լիազորության չի վերապահված և մերժվել է դիմումը:

1.6.2. Ի պատասխան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ուղղված դիմումի Է. Հախվերդյանը 2013թ. հունվարի 9-ին ստացել է N 2/5-13 գրություն, որով հայտնել են, որ Է. Հախվերդյանի հիվանդության բուժումը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ֆինանսավորվող ծառայությունների շրջանակի մեջ չի ընդգրկված և այդ նպատակով նախարարությանը ՀՀ պետական բյուջեից համապատասխան ֆինանսական միջոցներ չի հատկացնում, ուստի նախարարությունը նրա բուժման համար փոխհատուցում կատարել չի կարող:

1.6.3. Ի պատասխան ՀՀ առողջապահության նախարարությանն ուղղված դիմումի Հախվերդյանը ստացել է նույնաբովանդակ պատասխան, մերժում:

1.7. 2013 թվականի մարտի 7-ին Է. Հախվերդյանը հայցադիմում եմ ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կառավարության և ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ կառավարության 04.03.2004 թվականի թիվ 318-Ն որոշումը և ՀՀ առողջապահության նախարարի 21.12.2010 թվականի թիվ 2082-Ա հրամանը մասնակի՝ «զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով երաշխավորված անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքը չնախատեսելու և չապահովելու մասերով, անվավեր ճանաչելու պահանջների մասին:

1.7.1. 18.03.2013թ-ին ՀՀ վարչական դատարանը կայացրել է որոշում՝ Էդվարդ Հախվերդյանի կողմից ներկայացված հայցադիմումի ընդունումը՝ ՀՀ առողջապահության նախարարի 21.12.2010 թվականի թիվ 2082-Ա հրամանը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասով մերժել, պատճառաբանելով նրանով, որ տվյալ ակտը արդեն իսկ 31.01.2012թ. թիվ 142-Ա ՀՀ առողջապահության նախարարի հրամանով ուժը կորցրել է:

Ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ կառավարության՝ 04.03.2004 թվականի թիվ 318-Ն որոշումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին, վերադարձվել հայցվորին:

1.7.3. 2013թ. մարտի 29-ին Է. Հախվերդյանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք հայցադիմումը վերադարձնելու մասով:

1.7.4. 2013թ. ապրիլի 29-ին ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը կայացրել է որոշում Է. Հախվերդյանի վերաքննիչ բողոքը մերժելու մասին:

1.7.5. 2013թ. ապրիլի 14-ին Է. Հախվերդյանի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք վերաքննիչ դատարանի 2013թ. ապրիլի 29-ի որոշման դեմ:

1.6. 2013թ. հուլիսի 25-ի ՀՀ կառավարության կողմից ընդունվել է N 806-Ն որոշումը, որի հավելված 2 սահմանվել է՝ սրտի փականների պրոթեզավորման, սրտի ռիթմը վարող սարքերի իմպլանտացիայի ծառայությունները, որպես պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն ու սպասարկում:

1.7. 2013թ. դեկտեմբերի 10-ին Է. Հախվերդյանի կողմից կրկին դիմում է ներկայացվել ՀՀ պաշտպանության նախարարություն, պահանջելով վերացնել 2013թ. հունվարի 23-ի ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության պետ Գ. Թեփելյանի թիվ 19/127 գրությամբ տրված մերժումը և փոխհատուցել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից կրած ծախսերը՝ 1.860.000 ՀՀ դրամ գումարի չափով:

1.8. 2014թ. հունվարի 15-ին ՀՀ Պաշտպանության նախարարությունից ստացվել է պատասխան գրություն ըստ, որի հայտնվել է, որ արտագերատեսչական բուժհաստատություններում մատուցված ծառայությունների արժեքի փոխհատուցման լիազորություն, ՀՀ ՊՆ վերապահված չէ:

Նաև հայտնել է, որ ՀՀ ՊՆ իրականացրել է զինծառայողներին, նրանց ընտանիքների անդամներին, (...) օժանդակության ծրագիր, վերջիններիս մատուցվող բժշկական ծառայությունների արժեքի փոխհատուցման գործում: Նշված ծրագրի շրջանակներում փոխհատուցվել են միայն տվյալ տարում մատուցված այն ծառայությունների արժեքը (կամ արժեքի 50 %-ը), որոնք իրականացվել են ՀՀ ՊՆ կողմից տրված ուղեգրերի հիման վրա, նույն տարում գործող պայմանագրերի շրջանակներում: 2013 թվականին ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նմանատիպ աջակցություն է ցուցաբերվել 897 շահառուի: ՊՆ գրությունը եզրափակել է նրանով, որ եթե ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կլինի համապատասխան թույլտվություն և ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը հնարավորություն կունենա սրտի վիրահատությունների գնման պայմանագրեր կնքել, դիմումատուի վիրահատության ծախսերի դիմաց, որպես օժանդակություն, կիրականացվի փոխհատուցում համապատասխան ծրագրով սահմանված չափով:

<u>2. ՀՀ Պաշպանության նախարարության կողմից Էդվարդ Հախվերդյանի նկատմամբ խտրական վերաբերմունքի մասին պնդումներ.</u>

2.1. ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ վարչարարությունը պետք է ուղղված լինի ՀՀ Սահմանադրությամբ և

օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

2011 թ. հոկտեմբերինց գրավոր կարգով Է. Հախվերդյանը դիմումներ է ներկայացրել ՀՀ պաշտպանության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և ՀՀ առողջապահության նախարարություններ, որոնց վերաբերյալ ստացել է մերժումներ:

Մասնավորապես պաշպանության նախարարությունը ի պատասխան Է. Հախվերդյանի կողմից ներկայացված դիմումի, հայտնել է, որ նրա խնդրանքի առումով, համաձայն գործող իրավական ակտերի, ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությանը որևէ լիազորություն վերապահված չէ և մերժվել է դիմումը:

Էդվարդ Հախվերդյանը, և վիրահատությունը իրականացնելու ժամանակահատվածում, և ներկայումս հանդիսանում է զինծառայողի ընտանիքի անդամ, ինչպես նաև զինված ուժերի թոշակառու:

ՀՀ պաշտպանության նախարարությունը միատեսակ փաստական հանգամանքներ ունեցող գործով տարբերակված մոտեցում է ցուցաբերել:

ՀՀ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 2013թ. նոյեմբերի 4-ին թիվ ԵՄԴ/0655/02/11 քաղաքացիական գործով ըստ հայցի Հովհաննես Խաչիկի Կաթրջյանի, <u>ՀՀ պաշտպանության նախարարության</u> ընդդեմ Հայաստանի առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնի՝ 9.229.000 ՀՀ դրամ առողջությանը պատճառված վնասը և 700.000 ՀՀ դրամ պատճառված վնասի փոխհատուցելու պահանջի մասին, կայացրել է վճիռ՝ հայցապահանջը բավարարելու մասին:

Պատասխանող Հայաստանի առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնից հօգուտ հայցվոր Հովհաննես Խաչիկի Կաթրջյանի բռնագանձվել է 6.370.000 ՀՀ դրամ:

Պատասխանող Հայաստանի առիթմոլոգիական սրտաբանական կենտրոնից հօգուտ ՀՀ պաշտպանության նախարարության բռնագանձվել է 700.000 ՀՀ դրամ գումար, որպես հայցվորին տեղադրված DR երկխոռոչանի 6-8 տարի ժամկետով և 8-10 տարի ժամետով սարքերի տարբերության գումարը:

Վկայակոչված վճռի[3] ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ 2008թ. հուլիսի 8-ին Հովհաննես Կաթրջյանը դիմում է ներկայացրել ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության պետին, ներկայացնելով ԱՍԽ փոխտնօրենի կողմից տրված 18.07.08 F 0076 տեղեկանքը, առ այն, որ Հ.Կաթրջյանը հետազոտվել է ԱՍԽ կլինիկայում և նրան առաջարկվել է սրտի ռիթմը վարող սարքի ռեիմպլանտացիա, որի արժեքը կազմում է 1 900 000 ՀՀ դրամ, նա խնդրել է կազմակերպել իր առողջական վիճակի հետազոտությունը և հետագա բուժումը:

ՀՀ պաշպանության նախարարությունը հիմք ընդունելով «զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության» մասին ՀՀ օրենքը, փոխհատուցել է Հովհաննես Կաթրջյանի մատուցած բուժծառայության արժեքը՝ 1.900.000 ՀՀ

3 Տես սույն դիմումի կից փաստաթղթեր բաժնում

դարմի չափով: Դեռ ավելին՝ սույն դիմումի փաստերի շարադրանք 1.8-րդ կետում ներկայացված ՀՀ ՊՆ պատասխան գրությամբ նախարարությունը հայտնել է, որ 2013 թվականին ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նմանատիպ աջակցություն է ցուցաբերվել 897 շահառուի:

ՀՀ վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք: (....):

Սույն պարագայում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից Հովհաննես Կաթրջյանի սրտի վիրահատության համար 1.900.000 ՀՀ դրամ փոխհատուցման պահին կիրառվել է «զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության» մասին ՀՀ օրենքը, որի կիրառումը Էդվարդ Հախվերդյանի դեպքում անհասկանալի պատճառներով մերժվել է:

ՀՀ վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով: (....)

ՀՀ ՊՆ այն պատասխանը[4], որ «եթե ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կլինի համապատասխան թույլտվություն և ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը հնարավորություն կունենա սրտի վիրահատությունների գնման պայմանագրեր կնքել, դիմումատուի վիրահատության ծախսերի դիմաց, որպես օժանդակություն, կիրականացվի փոխհատուցում համապատասխան ծրագրով սահմանված չափով» չի բխում իրավական պետության դրսևորած վարքագծից:

<u>3. Պետության պոզիտիվ պարտավորությունը.</u>

3.1. ՀՀ «Իրավական ակտերի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտը չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին:

Նույն օրենքի 2-րդ մասով սահմանվում է, որ ՀՀ կառավարության որոշումները չպետք է հակասեն ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ օրենքներին:

Նույն օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՀՀ նախարարների հրամանները, ինչպես նաև մարզպետների և Երևանի քաղաքապետի որոշումներն ու կարգադրությունները չպետք է հակասեն ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ օրենքներին:

[4] Տես փաստերի շարադրանք 1.8.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Է. Հախվերդյանը հանդիսանում է զինծառայողի ընտանիքի անդամ և զինված ուժերի թոշակառու: 2011թ. հոկտեմբերին ենթարկվել է սրտի անոթի ստենդավորման վիրահատության, որի արժեքը կազմում է 1.860.000 ՀՀ դրամ:

«Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի լեզալ և տառացի մեկնաբանությամբ ստացվում է, որ զինծառայողների, նրանց ընտանիքի անդամների և զինված ուժերի հաշմանդամների համար ՀՀ ստանձնել է պոզիտիվ պարտավորություն՝ ապահովելու որակյալ անվճար բժշկական օգնություն և հարկ է փաստել այն հանգամանքը, որ հիշատակված օրենքը որևէ հիվանդության տեսակի, սպասարկման ձևի վերաբերյալ բացառություն չի նախատեսել, ավելին, նորմի մեկնաբանությունից ակնհայտ է, որ ցանկացած բժշկական սպասարկում և աջակցություն պետք է կատարվի անվճար:

Հիշատակված նորմը սահմանել է, որ անվճար բժշկական սպասարկման կարգը և պայմանները պետք է սահմանի ՀՀ կառավարությունը:

2004 թվականի մարտի 4-ին ՀՀ կառավարությունն ընդունել է թիվ 318-Ն որոշումը, որով կարգավորվում է ՀՀ կողմից երաշխավորված անվճար բժշկական սպասարկման կարգը: Նույն որոշման հավելված 1-ով սահմանվել է որոշակի հիվանդությունների և սպասարկման տեսակների բացառության հնարավորություն, իսկ դրանց ցանկի ներկայացնելը թողնվել է ՀՀ առողջապահության նախարարի և ՀՀ ֆինանսների նախարարության հայեցողությանը:

ՀՀ առողջապահության նախարարը 2010թ-ի դեկտեմբերի 21-ին ընդունել է թիվ 2082-Ա հրամանը, որով հաստատվել էր «պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական ծառայությունների չափորոշիչը», որով նախատեսված չէր զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների անվճար բժշկական սպասարկման հնարավորություն, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված Էդվարդ Հախվերդյանի՝ որպես զինծառայողի ընտանիքի անդամ և զինվորական թոշակառուի իրավունքը:

ՀՀ պաշտպանության, ՀՀ առողջապահության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները վերը վկայակոչված ենթաօրենսդրական իրավական ակտերը ավելի վեր են դասել «զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի դրույթներից, որի արդյունքում չի փոխհատուցվել Է. Հախվերդյանի վիրահատության գումարները:

ՀՀ կառավարությունը 2013թ. հուլիսի 25-ին ընդունել է թիվ 806-Ն որոշումը, որի 2-րդ հավելվածի, 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ներառվել է նաև «...սրտի վիրահատական և ներանոթային միջամտությունների իրականացման (ընդ որում, կորոնար անոթների ստենտավորման փոխհատուցումը ներառում է ինչպես դեղապատ, այնպես էլ՝

ոչ դեղապատ ստենտի արժեքը), այդ թվում՝ սրտի փականների պրոթեզավորման, սրտի ռիթմը վարող սարքերի իմպլանտացիայի» ծառայությունների մատուցումը երաշխավորվում է պետության կողմից:

2013թ. հուլիսին ՀՀ կառավարությունը իր պոզիտիվ պարտավորության վերաբերյալ սահմանել է համապատասխան ընթացակարգ, սակայն դրա արդյունքում ևս չի կարգավորվել Էդվարդ Հախվերդյանի խնդիրը:

3.2. ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն՝ Կառավարությունը մշակում և իրականացնում է ՀՀ ներքին քաղաքականությունը: Կառավարության իրավասությանն են ենթակա պետական կառավարման բոլոր այն հարցերը, որոնք օրենքով վերապահված չեն այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների:

ՀՀ Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, օրենքների կամ Հանրապետության Նախագահի նորմատիվ ակտերի հիման վրա և դրանց կատարումն ապահովելու նպատակով կառավարությունն ընդունում է որոշումներ, որոնք ենթակա են կատարման Հանրապետության ամբողջ տարածքում:

ՀՀ «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» օրենքը ընդունվել է 1998թ. հոկտեմբերի 27-ին, որը ուժի մեջ է մտել 1998թ. նոյեմբերի 30-ին: Վկայակոչված օրենսդրության 33-րդ հոդվածով սահմանվել է զինծառայողների, նրանց ընտանիքի անդամների և զինված ուժերի հաշմանդամների համար ՀՀ ստանձնել է պոզիտիվ պարտավորություն՝ ապահովելու որակյալ անվճար բժշկական օգնություն և հիշատակված օրենքը որևէ հիվանդության տեսակի, սպասարկման ձևի վերաբերյալ բացառություն չի նախատեսել:

ՀՀ գործող ենթաօրենդրական ակտերով մինչև 2013թ. հուլիսի 25-ի ՀՀ կառավարության 806-Ն որոշումը, որևիցէ իրավական ակտով չի սահմանվել ՀՀ «զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» 33-րդ հոդվածի կիրառելիությունը կոնկրետ սրտի փականների պրոթեզավորման, սրտի ռիթմը վարող սարքերի իմպլանտացիայի ծառայությունների մատուցումը երաշխավորորելու վերաբերյալ:

Էդվարդ Հախվերդյանը ենթարկվել է սրտի վիրահատության այն ժամանակահատվածում, որ Պետությունը ունենալով պոզիտիվ պարտարություն ենթաօրենսդրական ակտերով ՀՀ «զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» օրենքի 33-րդ հոդվածի կիրակումը ապահովելու վերաբերյալ քայլեր չի ձեռնարկել:

ՀՀ ՊՆ ունենալով նմանատիպ դեպքերում փոխհատուցման մեխանիզմներ խտրական վարքագիծ է դրսևորել Է. Հախվերդյանի նկատմամբ, որ արդյունքում մինչ օրս վերջինս չի կարողանում իրացնել օրենքով իրեն տրված իրավունքը:

ՀՀ կառավարությունը արդեն իսկ որդեգրել է ՀՀ պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին ՀՀ քաղաքացիներին բուժման ծախսեր

փոխհատուցելու վերաբերյալ[5] քաղաքականություն, որի շրջանակներում նաև հնարավոր է լուծել է. Հախվերդյանի խնդիրը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի, ՀՀ «զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի, «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ, 8-րդ հոդվածների դրույթները.

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Ընդունել բարենպաստ վարչական ակտ Էդվարդ Հախվերդյանի «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից կրած ծախսերը՝ 1.860.000 ՀՀ դրամ գումարի չափով փոխհատուցելու մասին:

Կից ներկայացնում եմ՝

1. ՀՀ ՊՆ ներկայացված 26.12.2013թ. գրության պատճենը
2. ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության 23. 01. 2013թ. գրության պատճենը
2. լիազորագիր և անձնագրի պատճենները
3. Էդվարդ Հախվերդյանի կենսաթոշակառուի վկայականի պատճենը
4. թիվ 394 տեղեկանքի պատճենը
5. թիվ 393 ուղեգրի պատճենը
6. Տեղեկանք տրված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի» կողմից
7. թիվ 312 տեղեկանքի պատճեն
8. 26.12.2013թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացված գրության պատճենը
9. 09.01.2013թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխան գրության պատճենը:

[5] Տես ՀՀ կառավարության 2013թ. մարտի 28-ի 291-Ա որոշումը:

10. 17.10.2011թ. Է. Հախվերդյանի ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության պետին ներկայացված դիմումի պատճենը

11. 26.10.2011թ. ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության պետի գրության պատճենը

12. 28.03.2013թ. ՀՀ կառավարության. թիվ 291-Ա որոշման պատճենը

13. 10.12.2013թ. ՀՀ ՊՆ ներկայացված դիմումի պատճենը

14. 15.01.2014թ. ՀՀ ՊՆ-ից ստացված պատասխան գրության պատճենը

15. 23.04.2013թ. ՀՀ Լոռու մարզի Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ-ի գրության պատճենը

16. Էդվարդ Հախվերդյանի դեմ ներկայացված գումարի բռնագանձման պահանջի մասին հայցադիմումի պատճենը

17. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵՄԴ/0655/02/11 վճռի պատճենը (ոչ պաշտոնական):

Դիմող՝ Է. Հախվերդյանի ներկայացուցիչ
Արայիկ Զալյան

26. 03. 2014թ.